քայի ։ Հայք խնդրեցին ՚ի բանալ Դրան Տաճարին կանգնել ՚ի Գերեզմանն Լուսաբարին Հայոց , և եթէ ընդ Յունաց լինի , երկու Լուսաբարք ՚ի միասին կանգնեացին , այլ Յայնք ընդդէմ կացին այսմ, զի յատուկ հրովարտակ ունէին կանգնել Լուսարարի նոցա ՚ի Գերեզմանն պահապան անուամբ՝ պահել զբարինս նորին , զի մի Լատինք գողացեալ փոխադրեսցեն զնոսա յԵրուսա , որոյ վասն զայս խնդիր Թոզին յետոյ , բայց լռելեայն ետուն Իլամ զի եւ Լուսաբարն Հայոց կանգնեսցի ըստ Լուսարարին Յունաց · բայց ոչ ել հրովարտակ վասն այնր ։ Եւ յետ այնորիկ գրեաց Դատաւորն Հէօճճէթ , յոր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան և Իլամ, եւ ետուն հրաման պատարագելոյ Հայոց ՚ի վերայ Գերեզմանին Քրիստոսի ։

Այսպէս միաբանք Հայոց յետ կարգաւորելոյ զամենայն ինչ եւ զարդարելոյ զԳերեզմանն , գնացին բազմութեամբ ուխտաւորաց և քաղաքացի ժողովրդոց ՚ի տաճարն Ս · Յարութեան , և յետ աւարտելոյ պատարագին Յունաց , մատեան Հայք , զարդարեցին սպասուք զԳերեզմանն , և մեծահանդէս փառօք մատոյց զանմահ եւ զիրկագործ պատարագն Ադրիանուպօլսեցի Պօղոս Արք Եպիսկոպոսն՝ ծայրագոյն կառավարիչ Ս · Աթոռոյն (1829 · յ2 Սեպտեմբերի, երկուշաբթի գիշեր , ժամ 7) · յիշելով զննջեցեալս և ըզկենդանիս օրհնեալ ազգիս Հայոց · եւ եդին յիշատակարան մշտնջենաւոր յանուն Բիշմիշեան Միքայէլ և Պէզճեան Յարութիւն Ամիրայից , որպէս խնդրեալ էր Զաքարիա վարդապետ , և եղեւ ուրախութիւն մեծ եւ անպատմելի ցնծութիւն Հայոց · օրհնեցին զմեծ բարերարն ազգին ըզՍուլթան Մահմուտ Արքայ և զկայսերազուն որդիս նորին և զնախարարս և զիշխանաւորս ազգին , որք անխոնջ ջանիւք և ջերմեռանդ սիրով հոգաբարձու լեալ՝ աշխատեցան վասն այսպիսի երկնապարգեւ բարութեան՝ պայծառացուցեալ զանուն և զպատիւ ազգին առաջի աշխարհի ։

Իսկ Պօղոս եպիսկոպոս առեալ զդրեանս Դատաւորին առաքեաց ՚ի Կոստանդնուպօլիս առ Զաքարիա վարդապետ , ըստ սրամադրութեան նոցին խնդրել հրովարտակ Այքայէ , և յայտ առնել գվճռաւորաց ազգին զբարեխութիւնս եւ զցնծութիւնս իւրեանց , որ ՚ի տարաժամ